

## «ԱԼՖԱՍԵՔՅՈՒՐԻԹԻՉ»

### Սահմանափակ Պատասխանատվության Ընկերության

#### 2013 թ. տարեկան ֆինանսական վերլուծություն

Ընկերությունը 2013թ-ին իր առջև խնդիր էր դրել մատուցել որակյալ ներդրումային ծառայություններ կատարելով իր հաշվին և անունից գործարքներ, հնարավորություն տալով ֆիզիկական անձանց օգտվել ՀՀ արժեթղթերի շուկայի զանազան գործիքներից:

2013 թվականի ընթացքում ՀՀ ֆինանսական շուկայում տեղի ունեցան մի շարք հիմնարար փոփոխություններ, առավելապես ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի հաշվարկի փոփոխությունը, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի իջեցումը, ՀՀ պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության տոկոսադրույքների իջեցումը, այս ամենի հետ մեկտեղ բանկերի կողմից առաջարկվող բարձր տոկոսադրույքներով ավանդները պատճառ հանդիսացան, որ մեր պոտենցիալ հաճախորդներն իրենց որոշումը կայացնեն դեպի բանկերը: Վերոնշյալն իր բացասական անդրադարձն ունեցավ Ընկերության կողմից նախատեսված հաճախորդների ներգրավման հարցում: Չնայած այդ ամենին 2013 թվականին Ընկերությունը միջոցառումներ է ձեռնարկել նոր ֆինանսական կառույցների հետ համագործակցության ուղղությամբ և ունեցել է դրական արդյունք:

2013թ գործունեության ընթացքում «Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ-ի ռազմավարությունն ուղղված է եղել շուկայում ձևավորված պայմանների ներքո պահպանել ռիսկայնություն-շահութաբերություն օպտիմալ հարաբերությունը:

Ընկերության կառավարման մարմինը դրական է գնահատում կատարված աշխատանքները: Արժեթղթերի շուկայում գործունեության տասնմեկ տարվա շարունակական փորձը, գործնական կապերը, աշխատակիցների հմտությունը և իրազեկությունը թույլ տվեցին Ընկերությանը ոչ միայն դիմակայել ֆինանսական շուկայում ստեղծված բավականին բարդ իրավիճակին, այլ նաև ապահովել հիմնական կապիտալի պահանջվող ցուցանիշը:

2013 թվականի ՀՀ ֆինանսական շուկայի ցուցանիշների վարքագծերը դրական ազդեցություն են թողել Ընկերության արդյունքների վրա: Արդյունքում, Ընկերությունն ակտիվ մասնակցություն է ունեցել արժեթղթերի շուկայում: Աճել է Ընկերության պետական պարտատոմսերով իրականացվող ռեպո գործարքների ծավալը: 2013 թվականի ռեպո գործարքների միջին տոկոսադրույքը կազմել է 8.65%՝ նախորդ տարվա համեմատ ռեպո տոկոսադրույքը եղել է ավելի կայուն:

Ընկերության 2013թ գործունեության արդյունքները վկայում են, որ, Ընկերությունը հետևողականորեն կայացնում է իր առջև դրված նպատակներն ու խնդիրները (տես՝ աղյուսակ 1): Ընդամին, հատկանշական է, որ ծրագրային առաջադրանքները 2013թ կատարվել և գերակատարվել են հիմնական ցուցանիշների առավել ընդգրկուն կազմով:

Նախատեսված խնդիրների կատարողականը գնահատվում է հետևյալ կերպ.

Ներդրումային ընկերությունների ընդհանուր ակտիվները առ 31.12.2013 թ դրությամբ կազմում են 27,3 մլրդ դրամ: Ընկերության տեսակարար կշիռը կազմում է 17% և զբաղեցնում է 3-րդ տեղը ներդրումային ընկերությունների ընդհանուր ակտիվների կազմում: Ընդհանուր պարտավորությունները կազմում են 21,9 մլրդ դրամ, իսկ սեփական կապիտալը 5,4 մլրդ դրամ: Ընկերության տեսակարար կշիռները կազմում են համապատասխանաբար 17,4% և 15,4%:

Նախատեսված խնդիրների կատարողականը գնահատվում է հետևյալ կերպ.

*ա) ներդրումային ընկերության կապիտալիզացումը.*

Ընկերության ընդհանուր կապիտալը 2013 թվականին նախատեսվում էր ավելացնել մինչև 400 մլն դրամ: Ծրագրային առաջադրանքը կրկնակի անգամ գերակատարված է: Փաստացի ծավալը կազմել է 827.7 մլն դրամ՝ աճելով նախորդ տարվա համեմատ 95,5%-ով: Ընդհանուր կապիտալի տեսակարար կշիռը Ընկերության ռեսուրսային պոտենցիալում կազմել է 17,8 %, նախորդ տարվա 10,0 %-ի դիմաց: Ընդհանուր կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցության մակարդակը 2013թ. կազմել է 21,7%՝ 2012թ. 11,2% դիմաց:

*բ) ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունները.*

2013 թվականի ընթացքում Ընկերությունը *ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայություններից իրականացրել է* ինչպես ՀՀ պետական պարտատոմսերով և ՀՀ ոչ պետական պարտատոմսերով, այնպես էլ ՌԴ ոչ պետական բաժնետոմսերով դիլերային ծառայություններ:

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ներդրումները պետական արժեթղթերում կազմել են 3,9 մլրդ դրամ, գրեթե համընկնելով նախատեսված ցուցանիշի հետ: Միջոցները հիմնականում ներգրավվել են ՀՀ ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերի միջոցով:

Ընկերությունը տարվա ընթացքում ձեռք է բերել 1260,0 մլն դրամի անվանական արժեքով պետական պարտատոմսեր և վաճառել՝ 1630,4 մլն դրամի, արդյունքում 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պետական պարտատոմսերի պորտֆելի ընդհանուր ծավալն անվանական արժեքով կազմել է 3876,6 մլն դրամ՝ նախորդ տարվա 4247,0 մլն դրամի փոխարեն: 2013թ. դեկտեմբերի վերջին արժեթղթերի պորտֆելի 73.1%-ը կամ 2831,6 մլն դրամ բաժին է ընկել միջին ժամկետայնության պարտատոմսերին և 26,9%-ը կամ 1045,0 մլն դրամ՝ երկարաժամկետ պարտատոմսերին: Պորտֆելի 33.9%-ը դասակարգված է եղել որպես մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, իսկ 66.1%-ը վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պորտֆելի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է մոտ 12.43 %՝ ներգրավված միջոցների 8,65% դիմաց:

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կորպորատիվ արժեթղթերի ընդհանուր ծավալը կազմել է 21,8 մլն դրամ (անվանական արժեքով)՝ դրականորեն փոխվել է նախորդ տարվա համեմատ: 2013թ-ի ընթացքում Ընկերությունը ձեռք է բերել նաև ՀՀ ռեզիդենտ ընկերության արտարժույթային պարտատոմսեր, որի հաշվեկշռային արժեքը կազմել է 1,8 մլն դրամ:

2013թ ընթացքում Ընկերությունը շարունակել է ներդրում կատարել Ռ-Դ ոչ պետական բաժնետոմսերում:

զ) Ընկերության շահութաբերությունը, եկամուտները և ծախսերը.

Ընկերությունն իր առջև խնդիր էր դրել ապահովել 3,0-3,5% եկամտաբերության մարժա ներգրավված և տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների միջև:

Ընկերության տոկոսային եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 20.9%-ով և կազմել 536.7 մլն դրամ: Տոկոսային եկամուտները հիմնականում ձևավորվում են պետական պարտատոմսերում ներդրումներից:

Ընկերության տոկոսային ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 11.7%-ով և կազմել 364.2 մլն դրամ:

Տոկոսային եկամուտների և տոկոսային ծախսերի ավելացումը հիմնականում պայմանավորված էր ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջին ծավալների ավելացմամբ:

Արդյունքում, զուտ տոկոսային եկամուտները կազմել են 172.4 մլն դրամ նախորդ տարվա համադրելի հաշվետու ժամանակահատվածի 117.7 մլն. դրամի դիմաց:

Գործադիր տնօրեն

Գ.Գրիգորյան

Գլխավոր հաշվապահ

Կ.Սիմոնյան



Handwritten signatures in blue ink, corresponding to the names of the Executive Director and Chief Accountant.